

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|-------------------------------|---|
| ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | Էլեկտրասարքավորումների գծով վերահսկող |
| ՎԵՐԱԴԱՍԻ ՊԱՇՏՈՆԸ | Էլեկտրասարքավորումների գծով գլխավոր ինժեներ |
| ԺԱՄԿԵՏԸ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐԸ | Ամուլսար, Վայոց ձոր, ՀՀ |
| ԱՍՏԻՃԱՆԸ | |

AMULSAR GOLD MINE

Ամուլսարի ոսկու կույտային տարրավացման ծրագիրն իրականացվում է Վայոց ձորի մարզում: Հանքը շահագործվում է Լիդիան Արմենիա ընկերության կողմից: Այժմ իրականացվում է շինարարության փուլը, որին կհաջորդի շահագործման փուլը՝ 2018թ. երրորդ եռամսյակում:

1875տ/ժ հզորությամբ ոսկու մշակման գործարանը բաղկացած է մանրացման և տեսակավորման հանգույցներից, 5կմ երկարությամբ վերգետնյա փոխակրիչից, բեռնատարների բեռնաթափման համակարգից, ինչպես նաև ոսկու կույտային տարրավացման համակարգից և ԱԴՎ կայանից:

ՊԱՇՏՈՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էլեկտրասարքավորումների գծով վերահսկողը հաշվետու էլեկտրասարքավորումների գծով գլխավոր ինժեներին և պատասխանատու է էլեկտրական հատվածի կառավարման համար: Դա ներառում է հետևյալ պարտականությունները. էլեկտրական սարքավորումների, էլեկտրական փոխարկիչների տեխսապասարկում, ամբողջ հանգույցի տարածքում էլեկտրականության բաշխում սկսած հանքաքարի ընդունիչ բունկերից, մանրացման և տեսակավորման հանգույցից, վերգետնյա փոխակրիչից, բեռնաթափման համակարգից, ավազաններից և ԱԴՎ կայանից, այդ թվում դիզելային վառելիքով աշխատող, վթարային գեներատորից:

Հատուկ ուշադրություն է պահանջում վերգետնյա փոխակրիչը, քանի որ այն ընդգրկված է հոսանքի արտադրման և տեղամասի էլեկտրական ցանցի սնուցման գործընթացում:

Պատասխանատու է բոլոր 12 տեխնիկների գործունեության կառավարման և կազմակերպման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նախաձեռնող լինել տվյալ բաժնի աշխատակիցների անվտանգության և առողջության պահպանման ինչպես նաև բնապահպանական հարցերում, ուշադրություն դարձնել սարքավորումների կողպման, պիտակավորման և բարձր լարման անջատիչների հետ առնչվող գործընթաններում:

Պատրաստել և վերահսկել էլեկտրական հատվածի բյուջեն, ըստ անհրաժեշտության ստուգել պահուստային մասերի կիրառումը և տվյալ բաժնի համար անհրաժեշտ գործիքներ գնել:

Մերտորեն համագործակցել պլանավորման բաժնի հետ՝ մասնակցելով պլանավորման վերաբերյալ հանդիպումներին և ապահովելով պատվերների ժամանակին կատարումը և աշխատանքների որակի վերաբերյալ տվյալների ներբեռնումը համակարգ:

Վերահսկել և մշտադիտարկել բաժնի կողմից աշխատանքների իրականացումը:

- Շաբաթական պլան. Ապահովել էլեկտրական հատվածի համապատասխանությունը «Շաբաթական պլանին» և «Աշխատանքների դադարեցման պլաններին»:
- Կատարված աշխատանք. Ապահովել լավագույն չափանիշների համաձայն պատվերների կատարումը և պլանավորման բաժին դրանց ժամանակին ներկայացումը:
- Սարքավորումների և սարքերի տեխսպասարկում. Ապահովել էլեկտրական հատվածում կիրառվող բոլոր սարքերի և սարքավորումների տեխսպասարկումը լավագույն չափանիշների համաձայն:
- Որակ. Վերահսկել էլեկտրական սարքավորումների տեխսպասարկման արհեստանոցում իրականացվող աշխատանքների որակը և ստեղծել ընթացակարգեր աշխատանքների որակը բարելավելու նպատակով:
- Կապալառուներ. Պլանավորման գրասենյակի և էլեկտրական սարքավորումների գծով ինժեների հետ համատեղ համակարգել էլեկտրական հատվածի կապալառուների աշխատանքը, ըստ անհրաժեշտության:

Մշտապես բարելավել տեխսպասարկման պլանավորման աշխատանքները, աշխատանքային հրահանգավորումների գործընթացն ու աշխատանքային անվտանգությունը, ինչպես նաև վերջնական լուծումներ տալ կրկնվող խնդիրներին:

Հաշվետու աշխատակիցների կառավարում, այդ թվում խնդիրների լուծում, կատարողականության մակարդակի ուսումնասիրում, անհատական վերապատրաստման կարիք ունեցող աշխատակիցների բացահայտում և կոմպետենտության գնահատում:

Մշտադիտարկել տեխսպասարկման աշխատանքների համակարգչային կառավարումը բաժնի կողմից, առաջարկել և իրականացնել դրանց բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Մշակել էլեկտրական սարքավորումների վերականգնման ընթակարգեր:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Պահանջվող փորձ և որակավորում

- Աշխատանքային փորձ հանքարդյունաբերության ոլորտում և վերապատրաստում
- Or an engineering degree with extensive practical supervisory experience in the mining industry or related industry.
- Ինժեների որակավորում, վերահսկման փորձ հանքարդյունաբերության կամ հարակից ոլորտներում
- Վերահսկիչների համար նախատեսված դասընթացներում մասնակցություն
- Հաղորդիչ համակարգերի (Profibus), ծրագրով կառավարվող էլեկտրական ապարատների (Siemens PLC) հետ աշխատանքային փորձը կոնկրետ որպես առավելություն
- Բարձր և ցածր լարման էլեկտրական շարժիչների տեխսպասարկման և վերականգնման, բարձր լարման հոսանքի բաշխման, բարձր լարման էլեկտրական փոխարկիչների հետ աշխատանքի փորձ
- Հայերեն և ռուսերեն լեզուների վարժ տիրապետում, անգլերեն լեզվի աշխատանքային մակարդակով տիրապետում
- Աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն, անկողմնակալ վերաբերմունք

Հետևյալ համակարգերի հետ աշխատանքային փորձը կդիտվի որպես առավելություն

- ABB ընկերության տարբեր տեսակի շարժաբեռներ, Schneider և ABB ընկերությունների միջին և բարձր լարման կառավարման վահանակներ և ABB և Siemens տրանսֆորմանտորներ

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հետաքրքրված բոլոր թեկնածուները կարող են իրենց ինքնակենսագրությունն (ռեզյումեն) ուղարկել հետևյալ հասցեով hr@lydianinternational.co.uk Նամակի 'Subject' տողում անհրաժեշտ է նշել պաշտոնը: Միայն վերջին փուլ անցած (կարճ ցուցակում ընդգրկված) թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՄԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ

Հունվարի 08, 2018

ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼՈՒ ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ

Հունվարի 22, 2018